«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ «ՇՐՋՎԱԾ ԴԱՍԱՐԱՆ» ՄՈԴԵԼԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ ՈՐՊԵՍ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԹՈԴ

ԱՌԱՐԿԱ Գրականություն

ՀԵՂԻՆԱԿ Մարինե Մանուկյան

ՄԱՐԶ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Հայկաշենի Գ Կիրակոսյանի ավան միջնակարգ դպրոց»

ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 4

«ՇՐՋՎԱԾ ԴԱՍԱՐԱՆ » ՄՈԴԵԼԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ ՈՐՊԵՍ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԹՈԴԻ 5

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 8

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ N1 9

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ N2 13

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ N1 14

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ N2 16

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրականության ուսուցումը ուղղված է աշակերտների շրջանում ազգային արժեքների ճանաչման և միջմշակութային իրազեկության խթանմանը: Բնագավառը շեշտադրում է աշակերտի՝ բազմակողմանի զարգացմանը հաղորդակցության ժամանակ, ակտիվ սոցիալական դերակատարմանը, որտեղ իրազեկությունը օգնում է աշակերտին ճանաչել աշխարհը, բացահայտել նրանում տեղի ունեցող իրադարձությունները և ունենալ համապատասխան հույզեր, ապրումներ, ինչու ոչ նաև որևէ հերոսի օրինակ, որից կարող է աշակերտը ընդօրինակել դրականը և առաջնորդվել դրանով:

Կրթական համակարգի հետագա զարգացման որակական կողմը ներառում է կրթության բովանդակության ընտրությունը: Հետազոտական աշխատանքի կատարման համար հիմք է հանդիսացել վերլուծությունների արդյունքը, որը հիմք է անհանգստանալու և կենտրոնանալու այն խնդրի վրա, որ դպրոցականների շրջանում նվազել է հետաքրքրությունը գեղարվեստական գրականության նկատմամբ:

Հետազոտական աշխատանքի նպատակն է սովորողների շրջանում խթանել հետաքրքրություն գրականության և գրական ստեղծագործությունների ընթերցման նկատմամբ: Պարզել գրականության նկատմամբ սովորողների հետաքրքրության անկման պատճառները, ձևավորել սովորողների մոտ այլ հարթակներում սեփական մշակույթը ներկայացնելու կուլտուրա, հանդես գալ որպես ստեղծագործ և քննադատական մտածողությամբ օժտված անհատ:

Գտնել մոտիվացիայի բարձրացման ամենաարդյունավետ ուղիները, մեթոդներն ու միջոցները:

Ելնելով այն հանգամանքից, որ դպրոցականների շրջանում կա հետաքրքրության անկում գեղարվեստական գրականության ընթերցման նկատմամբ, ուստի դպրոցական դասընթացում պարտադիր է ՏՀՏ-ի գործածման կարևորությունը (ընթերցում, ֆիլմերի դիտում, ունկնդրում): նպատակի իրականացումը հնարավոր է այն դեպքում, եթե ձևավորվի

դպրոցականների մոտ գեղարվեստական գրականության նկատմամբ բարձր մոտիվացիա: Այդ տեսանկյունից կարելի է համարել, որ աշխատանքը կրում է արդիական բնույթ:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մենք պարտավոր ենք գիտելիքը փոխանցել հասկանալի ու պարզ,կարևոր է նաև, որ այն մատուցենք երեխային գրավող ժամանակակից մեթոդներով: Դասավանդման ինտերակտիվ մեթոդները կիրառելիս խթանում ենք աշակերտի ստեղծագործելու, վերլուծելու կարողությունները: Ուսումնական գործունեությունը բարդ ու բազմակողմանի է, այն առավել արդյունավետ իրականացնելու համար հարկավոր է ճիշտ կազմակերպված աշխատանք, որի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ սովորողը գիտելիքների ձեռքբերմանը զուգահեռ ստանում է իր կյանքի հետագա գործունեության համար անհրաժեշտ սոցիալական փորձ:

Կրթության հետ միաժամանակ երեխան պետք է դառնա նախաձեռնող, կարողանա ինքնուրույն հետազոտել, ստեղծագործել, ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում, փոխանցել իր իմացածը, ձեռք բերել հաղորդակցական, համագործակցային կարողություններ և ինքնուրույնություն:

Դպրոցը գիտելիքների շտեմարան է, և այն հիմք է հանդիսանում և դրվում է այն հիմնաքարը, որով պետք է առաջնորդվել ամբողջ կյանքում:

Ի՞նչ է մոտիվացիան. մոտիվացիայի առանձնահատկությունները կրթական գործընթացում

Մոտիվացիան համալիր կառուցվածք է, որը հիմնված է ճանաչողական, սոցիալական և անձնական դրդապատճառների համակցությամբ:

Հոգեբանության մեջ «մոտիվացիա» հասկացությունը այն երևույթների լայն շրջանակն է, որը դրդում է մարդուն գործողությունների:

«Շարժառիթ» բառն ինքնին լատ. Moveo - «շարժվել» բառն է: Առաջին անգամ «մոտիվացիա» տերմինը «Բավարար պատճառի չորս սկզբունք» հոդվածում օգտագործել է Ա.Շոպենհաուերը (1900-1910): Ներկայումս մոտիվացիայի բազմաթիվ մեկնաբանություններ կան, ինչը հաճախ բարդացնում է դրա միանշանակ ըմբռնումը: Մոտիվացիան (լայն իմաստով) այն ամենն է, ինչ առաջացնում է մարդու գործունեությունը ՝ նրա կարիքները, բնազդը, մղումները, հույզերը, վերաբերմունքը, իդեալները և այլն: Ժամանակակից հոգեբանության մեջ «մոտիվացիա» բառը օգտագործվում է երկակի իմաստով ՝ որպես վարք որոշող գործոնների համակարգ (սա ներառում է, մասնավորապես, կարիքներ, շարժառիթներ, նպատակներ, մտադրություններ, ձգտումներ և շատ ավելին) և որպես բնութագրիչ գործընթաց, որը խթանում և աջակցում է վարքային գործունեությունը որոշակի մակարդակով: Այսպիսով, մոտիվացիան կարող է սահմանվել որպես հոգեբանական պատճառների ամբողջություն, որոնք բացատրում են մարդու վարքը, դրա սկիզբը, ուղղությունը և գործունեությունը:Մոտիվացիայի գաղափարը ծագում է, երբ փորձում ես բացատրել, այլ ոչ թե նկարագրել վարքը: Հետազոտությունը ցույց է տալիս, որ սովորելու ներքին դրդապատճառ ունեցող սովորողը ավելի բարձր միավորներ է հավաքում, քան այն երեխաները, ովքեր ակամա են սովորում ։ Բացի այդ, հետաքրքրված երեխան հաճույք է ստանում իր աշխատանքից: https://hy.wikipedia.org/wiki/

«ՇՐՋՎԱԾ ԴԱՍԱՐԱՆ » ՄՈԴԵԼԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ ՈՐՊԵՍ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԹՈԴԻ

«Շրջված դասարան». Վերջին մի քանի տարիների ընթացքում «Դասարանի շրջում» դարձվածքն ամենից

հաճախն է հասնում մեր ականջներին, ու այդ ձայնը նոր թափ ստացավ 2012թ. «Նյու Յորք Թայմզ»-ում հրապարակված Ֆիցպատրիկի հոդվածով: «Դասարանի շրջում» մեթոդի էությունն այն է, որ նոր նյութի հետ սովորողների առաջին ծանոթությունը կայանում է դասարանից դուրս՝ սովորաբար կա՛մ կարդալով, կա՛մ տեսադաս դիտելով, իսկ հետո հատկացված դասաժամի ընթացքում ավելի դժվար աշխատանքն է կատարվում՝ նյութի ամրապնդումը խնդիրների լուծմամբ, քննարկումով կամ բանավեճով: Հիմնավորումը ըստ Բլումի 2001թ. լրամշակված տեսության թեմայի հարցերն են տրվում: Յուրաքանչյուր ցիկլը տևում է 13-ից 15րոպե:

Սա նշանակում է, որ սովորողները իմացական ավելի ցածր մակարդակի աշխատանքն (գիտելիքի ձեռքբերումը և ընկալումը)անում են դասարանից դուրս, իսկ ավելի բարձր մակարդակի իմացական աշխատանքի վրա կենտրոնանալը (կիրառումը,վերլուծումը, համադրումը, արժևորումը) կատարվում է դասարանում,որտեղ նրանք ունեն դասընկերների և ուսուցչի աջակցությունը: Այս մոդելը հակադրվում է ավանդականին, որում նոր նյութի հետ առաջին ծանոթությունը լինում է դասարանում, իսկ դրա ամրապնդումը տնային աշխատանքի միջոցով կատարվում է տանը: Այստեղից է տերմինը՝ «Շրջված դասարան»:

«Շրջված դասարան». ի՞նչ է սա որոշ առարկաների ուսուցման համար «Շրջված դասարան»-ի մոտեցումը նորություն չէ: Այն արդեն մի քանի տարի օգտագործվում է հատկապես հումանիտար հոսքում: Բարբարա Վոլվուդը և Վիրջինիա Ջոնսոն Անդերսենը այս մոտեցումը զարգացրել են իրենց «Արդյունավետ գնահատում» (1998) գրքում: Նրանք մի մոդել են առաջարկում, որով սովորողները սկզբնական գիտելիքն ստանում են նախքան դասը, իսկ դասի ընթացքում կենտրոնանում են համադրման, վերլուծության, խնդիրների լուծման և այլնի վրա:Որպեսզի համոզված լինեն, որ սովորողներն իրոք անում են անհրաժեշտ նախադասարանային աշխատանքը տանը, Վոլվուդը և Անդերսենը նոր նյութի հետ առաջարկում են նաև այդ նյութի վրա հիմնված որոշ տնային առաջադրանք (գրավոր շարադրանք, ոչ բարդ խնդիրներ):

Հետազոտական աշխատանքի ընթացքում կփորձեմ պարզել գրականության

նկատմամբ սովորողների հետաքրքրության անկման պատճառները և կիրառել «Շրջված դասարան» մոդելի կիրառումը՝ գրականության դասերին մոտիվացիայի խնդիրների լուծման ամենաարդյունավետ ուղիները, մեթոդները և միջոցները գտնելու համար:

Ուսումնասիրության խնդիրները

1. Ուսումնասիրել կրթական մոտիվացիայի խնդիրները հոգեբանական և մանկավարժական գրականության մեջ:
2. Ուսումնասիրել սովորողների վերաբերմունքը գրականություն ընթերցելու նկատմամբ, բացահայտել ուսումնական գործընթացի դժվարություններն ու խնդիրները:
3. Դպրոցում գեղարվեստական գրականության ընթերցման մոտիվացիայի խնդիրների վերաբերյալ կատարել հետազոտական վերլուծություն:
4. Վերլուծել և առաջարկել գեղարվեստական գրականության ճանաչողական մոտիվացիայի բարձրացման արդյունավետ ուղիներ:

Որպեսզի դասընթացը համատեղելի լիներ աշակերտների ուսանելու բազմազան ոճերի հետ, դասընթացը ներկայացնել.

1. էլեկտրոնային հարցաշարերով /Quizizz/

2. Հարստացված տեսահոլովակով /Edpuzzle/ Popplet, Miro, Linoit, Canva

3. Տեսադասերով

4. Ձայնագրությամբ ուղեկցվող Powerpoint ներկայացմամբ և Powerpoint սահիկներով, որոնք հնարավոր է նաև տպել թղթի վրա:

https://elearning.iedf.am/my/

Որպեսզի համոզված լինենք, որ աշակերտները նախապատրաստվում են դասին, նրանց հանձնարարվում է գործնական առաջադրանքներ անել, որոնք պարբերաբար,

բայց պատահական ընտրությամբ հավաքվում և գնահատվում են: Այնուհետև դասաժամին աշակերտներին մղում են աշխատանքի:

Ե՛վ ուսուցիչները, և՛աշակերտները «Շրջված դասարան» մեթոդը դրական են համարում: Ուսուցիչները տեսնում են, որ աշակերտները հիմա ավելի նպատակային են սովորում, քան երբ նրանց դասավանդում էին ավանդական ձևաչափով: Զննողական ուսուցումը Էրիկ Մազուրը և Կատերին Քրոուչը նկարագրում են «շրջված դասարան»-ի ձևափոխված մոտեցումը, որը նրանք անվանել են«Զննողական ուսուցում» (2001):

Հարցերին պատասխանելը կամավոր չի լինում, ինչպես ավանդական ուսուցման ժամանակ: Յուրաքանչյուր աշակերտ պետք է մասնակցի հարցմանը: Հարցման պատասխաններն անանուն են լինում, և ուսուցչի համար միանգամից պարզ է լինում, թե աշակերտների որ տոկոսն է հասկացել նոր նյութը: Եթե դասարանի 30-ից 60%-ը սխալ է պատասխանել, ապա կազմակերպվում են փոքր խմբերով քննարկումներ, որից հետո աշակերտները նորից պատասխանում են հարցերին: Լավ արդյունքից հետո հաջորդ թեմայի հարցերն են տրվում: Յուրաքանչյուր ցիկլը տևում է 13-ից 15րոպե: https://fliphtml5.com/qlam/vsin/basic/151-200

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Հետազոտական համատեքստում ներկայացվում է բովանդակային, տեխնիկական և կառուցվածքային պահանջներ:

Հետազոտական աշխատանքը կատարել եմ Աշոտավանի միջնակարգ դպրոցում, որտեղ աշխատում եմ երեսուն տարի:

Դասավանդում եմ 5-12-րդ դասարաններում հայոց լեզու և գրականություն: Հետազոտական աշխատանքի ժամանակ փորձարարական դասեր եմ անցկացրել 7-րդ և 8-րդ դասարաններում:

Ինչո՞ւ եմ ընտրել 7-րդ դասարանը:

Այս դասարանում սովորում են վեց տղաներ: Այս դասարանի աշակերտները ունակ են, բայց չեն սիրում ընթերցել: Չեն սիրում նաև պատմական ֆիլմեր դիտել, լսել արվեստի ներկայացուցիչների ընթերցմամբ ստեղծագործություններ: Երկար տարիների աշխատանքային փորձը ցույց է տվել, որ այս տարիքից նկատվում է մոտիվացիայի անկում գրականության նկատմամբ: Ինչ-որ տեղ, կարծում եմ, մեղավոր ենք նաև մենք, քանի որ մենք էլ պիտի փոխենք մեր մոտեցումները, ավելի շատ կիրառենք ՏՀՏ գործիքներ, դասը հետաքրքիր, բովանդակալից և հագեցած դարձնելու համար:

Փորձարարական դասերը դրա վառ օրինակներն են:

7-րդ դասարանի աշակերտները չեն սիրում ընթերցել, դա վկայում է այն, որ ամառային գրականություն չեն ընթերցում:

Տարիներ փորձը ցույց է տալիս, որ 6-րդ դասարանից հետո ընթերցանության նկատմամբ մոտիվացիայի անկում է նկատվում:

«Ինտերակտիվ կրթության զարգացում»հիմնադրամի կողմից ուսուցիչների վերապատրաստման դասընթավի ժամանակ ձեռքբերված ՏՀՏ գիտելիքների, quizizz, miro, edpuzzle, canva, wisemapping գործիքների կիրառումը և հմտությունների գործածումը կնպաստի աշակերտների մոտիվացիայի բարձրացմանը (ընթերցանության), շրջահայացության, մշակութային արժեքների ձևարման, այլ հարթակներում դրսևորվելու և հայրենի արժեքները ներկայացնելու գործում:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ N1

Ուսուցիչ՝ Մ. Մանուկյան

Դասարանը՝ 7-րդ

Առարկան՝ Գրականություն

Ամիս ամսաթիվ 11.11.2022թ

Տևողությունը՝ 45 րոպե

Առարկան՝ գրականություն

Քայլ1- Դասի թեման՝ «Ավելորդը» պատմվածքի գլխավոր հերոսների բնութագիրը Դասի տիպը՝ համակցված

Դասի նպատակները՝

Ա. Ուսուցանող՝ բնութագրել պատմվածքի գլխավոր հերոսներին, վերլուծել կերպարները՝ մեկնաբանելով նրանց արարքների շարժառիթները, հույզերն ու ապրումները:

Բ. Դաստիարակչական՝ սովորողի մոտ արմատավորել և դաստիարակել այն, որ ամենաթանկ և մեծագույն հարստությունը մարդն է, պետք է սիրել, օգնել, խնամել ու խնայել նրան, քանի որ մարդն անփոխարինելի է:

Գ. Զարգացնող՝ համեմատել մարդկային արարքները, առանձնացնել լավն ու վատը, մերժելին և ընդունելին:

Մեթոդը՝ «Շրջված դասարան»

1. Պատմվածքի ամբողջական ընթերցում(տանը):
2. Հերոսների բնավորությունների դրական և բացասական գծերը առանձնացում: 3. Zoom հարթակում քննարկում և ձայնագրում:

Դասի ընթացքը

Խթանում: Առաջադրված հարցերով վերհիշել պատմվածքի բովանդակությունը, գործողությունների զարգացման ընթացքը: /10 րոպե/ Օգտվել ՏՀՏ-ից:

https://quizizz.com/admin/quiz/6187f6b8fa2bbf001edf94be

https://www.youtube.com/watch?v=kALfMVnol-s&ab_channel=ArevMovsisyan

Դասարանը բաժանել երկու խմբի՝ յուրաքանչյուր խմբում երեք աշակերտ: «Շրջված դասարան» մեթոդով ներկայացնել գլխավոր հերոսներին: Մեկ խմբի հանձնարարել ներկայացնել Հաճի աղային, իսկ մեկ խմբի՝ Սրբունին:

Հաճի աղային վերաբերող հարցեր.

1. Ո՞վ էր Հաճի աղան: Կյանքի ինչպիսի՞ ճանարարհ էր անցել:
2. Եթե ես ճիշտ եմ հասկացել, «թուրքը գալիս է»արտահայտությունը պատմական այն ժամանակաշրջանն է ներկայացմում, երբ…
3. Ինչո՞ւ Հաճի աղան դաժանացավ, խստացավ, անգթացավ և որոշեց փրկել կարևորագույնը՝ թողնելով «Ավելորդը»:
4. Ի՞նչ կլիներ, եթե սահնակում միայն մեկ հոգու տեղ լիներ:
5. Գնահատել Հաճի աղային դեպքերի ժամանակ և դեպքերից ամիսներ անց: Արդյո՞ք շրջապատում նրա նման մտածող մարդիկ կային:
6. Ի՞նչ կանեիր, եթե դու լինեիր Հաճի աղայի տեղը:

Սրբունին վերաբերող հարցեր.

1. Ո՞վ էր Սրբունը և ինչու՞ էր ապրում եղբոր տանը:
2. Եթե ես ճիշտ եմ հասկացել, ի բնե աշխատասեր և ինքնասեր կինը ընտանիքի կար ու

կարկատանը և գուլպա գործելը իր վրա էր վերցրել, որպեսզի…

3. Ինչու՞ էր Սրբունը լալիս ճանապարհի պատրաստության ժամանակ:

4. Ի՞նչը կփոխվեր, եթե Սրբունը գնար նրանց հետ:

5. Գնահատել Սրբունին:

Ի՞նչ կանեիր, եթե դու լինեիր Սրբունի տեղը: Աշխատանքը ավարտելուց հետո աշխատել Տ –ձև աղյուսակով.

1. «Սրբուն», 2. «Հաճի աղա»:

Ներկայացնում են աշխատանքները: Նույն հերոսին երկու խմբով ներկայացնելը հնարավորորություն է տալիս լրացնելու միմյանց, համադրելու, տարբեր տեսանկյուններից դիտարկելու և ընդհանրացնելու:

Կշռադատում: Քննարկել՝/10 րոպե/

ա. Պատմվածքի վերջում ինչպե՞ս է Հաճի աղան բացատրում «ան ավելորդ է» արտահայտությունը: բ. Մահից առաջ ինչու՞ է խոստովանահորը ասում. «Մեղա՛ քեզի, մեղա՛…»:

Տնային առաջադրանք: Աղյուսակով ներկայացնել՝ «Կյանքում ի՞նչն է ավելորդ», «Կյանքում ի՞նչն է կարևոր»

Գնահատում (միավորային) /10 րոպե/

https://quizizz.com/admin/quiz/61878b8b12de40001d5b91a5/

Տնային առաջադրանք /5րոպե/

1.Առաջադրանքը՝ պրեզենտացիայի պատրաստում«Բնավորությունների

բախում»

2.Պատմվածքի ընթերցման շարունակություն:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ N2

Ուսուցիչ՝ Մ. Մանուկյան

Դասարանը՝ 8-րդ

Առարկան՝ գրականություն

Ամիս ամսաթիվ 09.11.2022թ

Տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման՝ «Թմկաբերդի առումը» պոեմը

Նպատակը՝ Հերոսականության, մարդկային առաքինության, մարդու անցողիկ կյանքի արժևորումը և վեհ գործերի անմահության գաղափարի դրվատումը: Դասը անցնելիս օգտագործում եմ «Շրջած դասարան մեթոդը»

Խթանման փուլ՝ պոեմի ունկնդրում ՏՀՏ-ի օգտագործում (կարդում է Սուրեն Քոչարյան): Edpuzzle

Դադադարեցնում ենք ունկնդրումը և երեխաները ընթերցում են բնագրից: Ընթերցելուց հետո կազմակերպվում է մտագրոհի մեթոդ: Համացանցից երեխաները դուս են գրում ասույթներ.

«Ամեն մարդու մասին դատում են ըստ նրա գործերի» Սերվանտես

«Ծառը պտղով է գովելի, մարդը՝գործով» ժող. առած

Իմաստի ընկալման փուլ՝ տեղեկություններ են տալիս Թմկաբերդի մասին (միջնադարյան դղյակ Մեծ Հայքի Գուգարք նահանգի, Վերին Ջավախքի գավառում, Կուր գետի ձախ ափին): Բերդը հետագայում ավերվել է:

Կշռադատման փուլ՝

Quizizz

Տնային առաջադրանք՝ պոեմից մեկ հատված սովորել անգիր:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ N1

08. նոյեմբերի 2022թ

Դասարան՝ 7-րդ

Առարկան՝ գրականություն

Մեթոդը՝ «Շրջված դասարան»

Դասի տիպը՝ համակցված:

Դասի նպատակները՝ աշակերտների մեջ սերմանել սեր դեպի գեղարվեստական գրականությունը, գրական արժեքների նկատմամբ ուշադրություն և նվիրվածություն:

Դասը համակցված էր, օգտագործել էի նաև «Շրջված դասարան» մեթոդը՝

հանձնարարելով տանն ընթերցել պատմվածքը և հատվածներ ինքնաձայնագրել՝ դասին ներկայացնելու համար:

Խթանման փուլը բավականին արդյունավետ էր: Ունկնդրեցին պատմվածքը. օգտագործեցինք Edpuzzle առցանց գործիքը:

Ունկնդրելուց հետո ընթերցեցինք ցանկալի հատվածներ, և կազմակերպեցինք մտագրոհի մեթոդ:

Իմաստի ընկալումը ստուգելու նպատակով օգտագործեցինք «Երիցուկի մեթոդը»: Այս փուլում աչքի ընկան նաև դասապրոցեսին դժվարությամբ ներգավվող աշակերտները:

Հայտնեցին կարծիքներ մտագրոհի մեթոդով, մեղադրեցին Հաճի աղային, խոսեցին ընտանիքի մասին, յուրաքանչյուրը ստացավ մեղադրանքի իր բաժինը, տեղաց մտքերի տարափ:

Գնահատումը. լրացվեց հայտորոշիչ թեստ (որակը 83%):

Բոլորը համոզվեցին, որ շատ կարևոր է կյանքի բախտորոշ պահին ճիշտ կողմնորոշվել, երբեք հարազատին չթողնել բախտի քմհաճույքին և բոլոր քայլերում լինել խոհեմ, կշռադատված:

Դասի թերությունը. աշակերտները վատ էին օգտվում համակարգչից, իսկ իմ տեղադրած հղումը չէր բացում (օգնության եկավ օպերատորը):

Դասի առավելությունը. դասարանն անչափ ոգևորված էր Edpuzzle առցանց գործիքի կիրառումից:

Դասալսողի կարծիքը՝ ՏՀՏ-ի օգտագործումը որոշակի բարձրացնում է մոտիվացիան գրականության դասաժամին և առաջացնում հեքտաքրքրություն աշակերտների մոտ:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ N2

10. նոյեմբերի 2022թ

Դասարան՝ 8-րդ

Առարկան՝գրականություն

Փորձարարական դասն անցկացրի գրականությունից։

Դասի թեման՝ «Թմկաբերդի առումը»:

Մեթոդը՝ «Շրջված դասարան»

Դասի տիպը՝ համակցված: Դասի նպատակները՝ աշակերտների մեջ սերմանել նվիրվածություն, հայրենասիրություն, բարություն: Դավաճանությունը որպես չարիք և ողբերգություն յուրաքանչյուր անհատի և շրջապատի համար: Հայրենասիրության և դավաճանության միջև ընկած սահմանի քննարկում: Դեպի գեղարվեստական գրականությունը, գրական արժեքների նկատմամբ ուշադրություն և նվիրվածություն։

Դասը համակցված էր, օգտագործել էի նաև «Շրջված դասարան» մեթոդը՝ հանձնարարելով տանն ընթերցել պոեմը: Կարողանան արտասանել արտահայտիչ և ներգործող ձայնով։ Խթանման փուլը բավականին արդյունավետ էր: Ունկնդրեցին պոեմը։ Օգտագործեցինք Edpuzzle առցանց գործիքը: Դասարանը բաժանվեց երկու խմբի, աշխատեցին մտագրոհի մեթոդով և քառաբաժան մեթոդով:

Իմաստի ընկալումը ստուգելու նպատակով օգտագործեցինք quizizz գործիքը (հայտորոշիչ թեստ): Այս փուլում աչքի ընկան նաև դասապրոցեսին դժվարությամբ ներգավվող աշակերտները։ Հայտնեցին կարծիքներ մտագրոհի մեթոդով, մեղադրեցին Թմկա տիրուհուն, խոսեցին Նադիր շահի խորամանկության, ագահության և անազնիվ քայլի մասին:

Բոլորը համոզվեցին, որ շատ կարևոր է կյանքի բախտորոշ պահին ճիշտ կողմնորոշվել, երբեք հարազատին չթողնել բախտի քմահաճույքին և բոլոր քայլերում լինել խոհեմ,

կշռադատված: Դասի թերությունը. աշակերտները վատ էին օգտվում համակարգչից, իսկ իմ տեղադրած հղումը չէր բացում (օգնության եկավ օպերատորը):

Դասի առավելությունը. դասարանն անչափ ոգևորված էր Edpuzzle առցանց գործիքի կիրառումից:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Փորձարարական դասն ունի մեթոդական նպատակ, որում արտացոլում է այն, ինչ ուսուցիչը ցանկանում է ցույց տալ աշակերտներին:

Մեթոդական նպատակների ձևակերպումը բազմազան է: Փորձարարական դասը մեթոդական աշխատանքի կազմակերպման ձև է: Փորձարարական դասերը պահանջում են մեթոդական աշխատանքի հատուկ պատրաստվածություն:

«Ինտերակտիվ կրթության զարգացման» հիմնադրամի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացը ինձ հնարավորություն տվեց ՏՀՏ-ի միջոցով կազմակերպելու և ՏՀՏ գործիքների միջոցով դասն ավելի բովանդակալից, հագեցած և նորովի մատուցելու հնարավորություն:

7-րդ և 8-րդ դասարաններում կազմակերպել և անցկացրել եմ երեք փորձարարական դաս: Առաջին փորձարարական դասի ժամանակ օգտագործել եմ «Շրջված դասարան» մեթոդը: Հանձնարարված էր ամբողջությամբ ընթերցել «Ավելորդը» պատմվածքը:

Աշակերտները համագործակցել էին, յուրաքանչյուրը ընթերցել էր պատմվածքից մեկ հատված: Դասի խթանման փուլում օգտագործվեց edpuzzle գործիքը (ունկնդրում և շարունակում): ՏՀՏ գործիքի կիրառումը ոգևորեց աշակերտներին: Աշակերտներն անհամբերությամբ սպասում էին հայոց լեզվի դասաժամին, նոր մեթոդներով և ՏՀՏ գործիքով անցկացվեր հայոց լեզվի դասը: Հայոց լեզվի ժամին (գոյական անուն) գործածվեց quizizz, edpuzzle գործիքները: Դասն ավելի արդյունավետ և ուսանելի էր: quizizz գործիքի միջոցով

հայտորոշիչ թեստը լրացրեցին (միավորային չէր, որպեսզի աշակերտները չլարվեն):

Երրորդ փորձարարական դասին գործածվեց նաև wisemapping գործիքը, որին աշակերտները մեծ ոգևորությամբ ծանոթացան:

Դասն անցավ ակտիվ, ջերմ մթնոլորտում, ուսանելի, հագեցած նորություններով: ՏՀՏ գործիքների կիրառումը դասին խթանում է աշակերտների ինքնուրույն աշխատանքը և մղում աշխատասիրության: Առաջացնում է սեր, հետաքրքրություն, ընկալունակության մեծացում և մեծացնում է մոտիվացիան ՏՀՏ-ի գործիքների, գրականության, հայոց լեզվի նկատմամբ:

Համեմատելով փորձարարական դասերը՝ նկատեցի մեծ առաջընթաց և դասերը համարեցի հաջողված, ուսանելի:

Դասի ուժեղ կողմը՝ ակտիվ մասնակցությունն է բոլորի կողմից, ՏՀՏ գործիքների կիրառման միջոցով հետաքրքրության մեծացում առարկայի նկատմամբ:

Դասի թույլ կողմը՝ Համակարգիչների հին էին, վատ էին ասխատում, որն առաջացնում էր որոշակիդժվարություններ: Այնուամենայնիվ ես ունեցա հաջողություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության ընթացքում բացահայտել եմ գրականության դասերին աշակերտների կրթական գործունեության մոտիվաթիայի էությունն ու առանձնահատկությունները: Աշակերտների կրթական գործունեության առանձնահատկություններն են կրթական առաջադրանքների իրականացման ստեղծագործական մոտեցումը ինքնակրթության և ինքնաքզարգացման պատրաստակամությունը: ՏՀՏ գիտելիքների ձեռքբերումը, նոր գիտելիքների տիրապետելու կայուն ցանկությունը:

Քանի որ կարճ ժամանակ էր մեզ հատկացված, այս հետազոտական աշխատանքը կատարելու համար, ուստի այն հանգեցրեց որոշակի դժվարությունների:

Որոշ դասերի ունեցա մեծ ձեռքբերումներ, որոշներին՝ ոչ: Որոշ դասերի կարողացա իրագործել նպատակներս՝ կիրառելով ՏՀՏ գործիքներ:

Դասին կիրառելով ինձ համար բոլորովին նոր ՏՀՏ գործիքներ, կարողացա սեր արթնացնել դասի նկատմամբ անտարբեր աշակերտների մոտ և ներգրավել դասին, և դասը դարձնել առավել արդյունավետ և հետաքրքիր:

Այս աշխատանքները կատարելիս ունեցա որոշակի խնդիրներ, որոնք կլուծվեն մոտիվացիայի արդյունքում: «Շրջված դասարան» մոդելի կիրառումը գրականության դասերին որպես մոտիվացիայի խնդիրների լուծման մեթոդ, կնպաստի աշակերտներին էլ ավելի շատ ընթերցել և սիրել գրականությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վիքիպեդիա

https://hy.wikipedia.org/wiki/

https://hy.wikipedia.org/wiki/

2. Յուրա Գանջալյան. Երևակում եմ դասավանդողի կյանքի իմ հետքը

https://fliphtml5.com/qlam/vsin/basic/151-200

3. Մարինե Եղոյան Մոտիվացիա

https://www.iammedia.am/hy/post/Motivation

4. Մանկավարժական հանդես Մխիթար Սեբաստացի կրթահամալիր «Շրջված դասարան» https://dpir.mskh.am/hy/node/761

5. Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման եվ հաստատման ընդհանուր դրույթներ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149788

6. Շրջված դասարան մոտեցումն ուսուցման գործընթացում Նարինե Մեսրոպյան https://www.youtube.com/watch?v=SHS96Icdk2U&ab_channel=ParadigmaEducationalFoundation